ԱԶԱՏՈՒՀԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԱՅԻՆ ԵՎ ՓՈՓՈԽԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Անցումային փուլում գտնվող երկրների համար էական և կարևորագույն խնդիր է տնտեսության զարգացումը: Դրան է միտված պետության տնտեսական քաղաքականությունը: Այն ծրագրված միջոցառումների համալիր է, որի խնդիրն է բարձր արտադրողականության բազմաճյուղ տնտեսական համակարգի ստեղծումը և դրա միջոցով մարդկանց բարեկեցիկ կյանքի ապահովումը:

Տնտեսական քաղաքականության իրականացման ժամանակ պետք է հաշվի առնել ազգային տնտեսության առանձնահատկությունները, խնդիրները, սոցիալական, արտաքին խթանները, նաև ներքին պաշարները, ռեսուրսապահովվածությունը, պետության դիրքը և այլ պայմաններ:

Տնտեսական քաղաքականության արդյունավետությունը կամ անարդյունավետությունը հիմնականում իրենց արտահայտությունն են գտնում հասարակության կենսամակարդակում: Մարդկանց կենսական պայմաններից, ապրելակերպից, սոցիալական վիճակից ելնելով՝ կարող ենք կարծիք կազմել այդ գործընթացի մասին: Ցավոք, մեր հանրապետությունում, շուկայական հարաբերությունների համակարգին անցման արդի փուլում, դեռևս հստակ չի մշակված տնտեսական քաղաքականության ռազմավարական նշանակություն ունեցող ծրագիրը:

Տնտեսական քաղաքականության հիմքում ընկած են մի շարք նախապայմաններ, որոնց ապահովման դեպքում կարող ենք ակնկալել դրական արդյունք: Վերջիններս են, օրինակ, հասարակական պահանջմունքների բավարարման նպատակով առաջնահերթ սպառման ապրանքների արտադրությունը, ապա ընդհանրապես արտադրության զարգացման ապահովումը, սեփականության տարբեր ձևերի ձևավորումը և ապապետականացման գործընթացի ճիշտ կազմակերպման ապահովումը, առկա սահմանափակ ռեսուրսների գնահատումը և ռացիոնալ բաշխումը, նպատակային ոլորտների զարգացումը, պետական օժանդակության ապահովումը, արտահանման խրախուսումը, տնտեսության զարգացման և ներդրումների խթանման համար բարենպաստ պայմանների ապահովումը, վարկային միջոցների ճիշտ տնօրինումը և արտոնյալ պայմաններով տրամադրումը, արտադրողների և ներդրողների համար շահագրգիռ, գրավիչ հարկային դաշտի ձևավորումը, ներքին ատադրողների

շահերի պաշտպանության ու տնտեսական անվտանգության ապահովումը և այլն:

Պետության դերը հասարակական կյանքում էական է, և ցանկացած ոլորտ, մասնավորապես տնտեսականը, պետք է գտնվի պետության «հսկողության» տակ: Պետության կողմից իրականացվող միջոցառումների ողջ համալիրը կատարվում է անուղղակի միջամտությամբ՝ ստեղծվում են բարենպաստ պայմաններ, մշակվում են տնտեսության զարգացման համար անհրաժեշտ ուղենիշներ: Պետության «միջամտություն» ասելով ի նկատի ունենք որոշումների, մեթոդների միջոցով կարգավորումը, համապատասխան օրենսդրական ակտերի ընդունումը, անցման փուլում ճիշտ քայլերի հաջորդականության կատարումը և այլն: Այսինքն պետությունը տնտեսության կազմակերպմանը «մանակցում է» հիմնականում տնտեսական քաղաքականության միջոցով՝ ճանապարհ հարթելով և նպաստավոր պայմաններ ստեղծելով տնտեսվարող սուբյեկտների համար. արտադրողը լիովին անկախ է իր գործունեության կազմակերպման ժամանակ, բայց կրում է որոշակի պարտավորություններ (օրինակ, հարկերի վճարումը, պարտադիր սոցվճարումները):

Մեր երկրում սոցիալական շերտավորումը խիստ ակնհայտ է: Դեռևս ձևավորված չէ միջին խավը, քանզի զարգացած չէ փոքր և միջին բիզնեսը, և առհասարակ ձեռնարկատիրական գործունեությունը՝ պայմանավորված և պետության դեռևս ոչ արդյունավետ գործունեությամբ, և՝ տնտեսական անկայունությամբ (թեև այժմ որոշակի քայլեր կատարվում են այս ուղղությամբ): Խիստ կարևոր են նաև ըստ ճյուղերի բարեփոխումները: Վարչահրամայական համակարգի փլուզումից հետո Հայաստանի տնտեսության առանձին ճյուղերի զարգացման շրջանում անհրաժեշտ էր հաղթահարել բազում դժվարություններ, կապված ռեսուրսների, նյութերի հայթայթման, էներգետիկ հիմնախնդիրների լուծման, համապատասխան տեխնոլոգիաների մշակման ու կիրարկման հետ:

Կարևորագույն խնդիր է նաև գյուղատնտեսության զարգացումը: Հողի մասնավորեցման գործընթացի ոչ ճիշտ ընթացքը զգալիորեն ազդեց գյուղատնտեսության զարգացման տեմպերի վրա: Գյուղտեխնիկայի անբավարար քանակի, այլ նյութերի սակավության, ֆինանսական միջոցների սղության արդյունքում գյուղացին հայտնվեց դժվարին կացության առջև: Գյուղատնտեսության զարգացման ապահովման համար, նախ, պետք է կարգավորել հողի սեփականաշնորհման մասին իրավական դաշտը, պետք է ապահովել համապատասխան տեխնիկայով, օժանդակ նյութերով, գյուղացիներին տրամադրել երկարաժամկետ վարկեր՝ արտոնյալ պայմաններով (թերևս ՀԳՁՓ բանկը տրամադրում է վարկեր գյուղացիներին, սակայն ոչ բոլորին է հասու այդ): Կարևոր է նաև բնական աղետներից գյուղացու աշխատանքի ապահովագրումը: Իսկ ինչ

վերաբերում է արտաքին առևտրին, ապա ներմուծումը ավելի է գերակշռում, ինչը բնավ չի կարող զարգացման հուսալի խթան հանդիսանալ: Ներկայումս որոշ ապրանքներ Հայաստանում արտադրվում են, բայց և այնպես արտահանումը դեռևս քիչ տոկոս է կազմում, որը պայմանավորված է նաև տնտեսական շրջափակմամբ:

Ֆինանսական համակարգի կայունությունը տնտեսական զարգացման գրավականներից է: Կարևորագույն խնդիր է նաև ազգային դրամի նկատմամբ վստահության ձևավորումը, որը հատկապես կարևոր է ՀՀ տնտեսության զարգացման և խնայողությունների մակարդակի բարձրացման ապահովման համար: Կենսական նշանակություն ունի նաև բանկային համակարգի զարգացումը՝ կարևորելով հատկապես Կենտրոնական բանկի դերը այս գործընթացում: Էական է նաև բյուջետային համակարգի կարգավորումը, որի միջոցով հնարավոր է ապահովել բյուջեի հավասարակշռություն՝ ճշգրիտ եկամտային և ծախսային քաղաքականության իրականացման միջոցով:

Տնտեսության զարգացման, արտադրության վերականգնման ռազմավարական քայլերից է հարկային և ներդրումային քաղաքականությունը, որը բազում սոցիալական հիմնախնդիրներ կլուծի: Ներդրումների խթանման համար անհրաժեշտ է ապահովել բարենպաստ պայմաններ, օրինակ, օրենսդրական դաշտի կարգավորումը, շահութահարկի դրույքաչափի փոփոխումը և այլն: Ներդրումները պետք է կատարվեն, արտաքին շուկայում մրցունակ արտադրության ոլորտներում, գիտության և տեխնոլոգիաների զարգացման բնագավառներում: Ներկայումս ներդրումների հոսքի համար խոչընդոտ են հանդիսանում սակավ բնական ռեսուրսները, տրանսպորտային շրջափակումը, անկատար օրենսդրական դաշտը և այլն: Հարկային ոլորտում իրականացվել են մի շարք բարեփոխումներ (շահութահարկի, եկամտահարկի դրույքաչափերի նվազում, արտոնությունների սահմանում, օրենսդրական բարեփոխումները և այլն), որոնք միտված էին ազատ և մրցակցային տնտեսական գործունեության ծավալմանը: Սակայն հարկային բեռը հիմնականում «ծանրացած է» անուղղակի հարկերի վրա, քանզի տնտեսվարող սուբյեկտները կամ խուսափում են գործունեություն ծավալել՝ բարձր հարկերի պատճառով, կամ էլ՝ հարկերը վճարել: Այսինքն՝ հարկահավաքման կուլտուրան դեռևս ցածր մակարդակի վրա է՝ վկայելով ստվերային տնտեսության մասին: Ուստի անհրաժեշտ է վերանայել հարկային վարչարարությունը, հարկերի դրույքաչափերը՝ նկատի ունենալով տնտեսության զարգացման մակարդակը, սոցիալ-տնտեսական իրավիճակը: Կարևոր է նաև միջազգային չափանիշներին համապատասխան արտադրության կազմակերպումը, որը հնարավոր է միայն նոր տեխնիկայի և

տեխնոլոգիաների ներդրմամբ՝ անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում:

Սակայն արդի պայմաններում եթե ստվերային տնտեսության դեմ ոչ մի մեխանիզմ չկիրառվի, ապա և տնտեսության զարգացում, և բյուջեի եկամուտների ավելացում չենք ակնկալի: Ստվերային տնտեսությունը արդյունք է անարդյունավետ հարկային և մաքսային քաղաքականության, օրենսդրական դաշտի անկատարության, պատասխանատվության չենթարկվելու: Ուստի կառավարության խնդիրն է նվազագույն մակարդակի հասցնել ստվերային դաշտը՝ ծեռնարկությունները բերելով հարկային դաշտ, բացառելով մենաշնորհների գործունեությունը:

Ինչպես նշվեց, տնտեսության զարգացման կարևոր գործոններից է երկրի ռեսուրսաապահովվածությունը, մասնավորապես անցումային փուլում: Պայմանականորեն այդ ռեսուրսները բաժանենք երկու խմբի՝ օբյեկտիվի և սուբյեկտիվի: Օբյեկտիվ ռեսուրսների խմբում ընդգրկենք տնտեսական իրավիճակը բնութագրող ներքին հնարավորությունները և արտաքին միջոցները, այսինքն՝ այն ռեսուրսները, որոնք կարտացոլեն տնտեսական իրավիճակը հնարավորինս օբյեկտիվ տեսանկյունից, այն է՝ ինչ անկախ է, իսկ որպես սուբյեկտիվ ռեսուրս՝ ընդունենք ռազմավարությունը:

Օբյեկտիվ ռեսուրսները կարող են հանդես գալ նաև որպես տնտեսական քաղաքականության հիմքային և փոփոխական գործոններ:

Որպես հիմքային գործոններ հանդես են գալիս՝

- ներքին պաշարները (բնական ռեսուրսներ, ներքին միջոցներ, թեև սուղ, ազգային հարստություն....)
- այլ պետությունների ոչ պետական հաստատությունների կողմից օգտագործվող ռեսուրսները (կապը, էլեկտրաէներգիան, ջուրը....)
- արտաքին, բայց ոչ պետական ռեսուրսները (ներդրումներ, վարկեր, դրամաշնորհներ....)
- արտաքին պետական ռեսուրսները (վարկեր, դրամաշնորհներ, ներդրումներ....)
- միջազգային կառույցների հետ պայմանագրերը, վարկային միջոցներից գոյացած արտաքին պարտքերի զիջումները,
- կադրային քաղաքականությունը:

Հիմքային գործոնները տնտեսական քաղաքականության այն բաղադրատարրերն են, որոնք մշտապես առկա են ու անխուսափելի, սակայն փոխվում են դրանց օգտագործման չափերը: Հիմքային գործոնները անհրաժեշտ, պարտադիր տարրեր են: Հիմքային գործոնները տնտեսության զարգացման շարժիչ ուժն են, ուղենիշը: Անկախ արժեքներից՝ ընդհանուր են ողջ գործընթացի

համար: Ի տարբերություն հիմքային գործոնների, փոփոխական գործոնները կարող են առաջ գալ զանազան օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով: Տարբեր են դրանց բնույթը, ընդգրկման շրջանակները, դրսևորման ժամանակահատվածը և տնտեսական կյանքի վրա ազդեցության չափերն ու հետևանքները:

Որպես փոփոխական գործոններ հանդես են գալիս՝

- բնակլիմայական պայմանները (բնական աղետներ և երևույթներ)
- քաղաքական իրավիճակը (ներքին լարվածություն, հեղափոխություն, պատերազմներ)
- ներքին ուժերի հարաբերակցության փոփոխությունը (իշխանություն, ընդդիմություն, այլ կուսակցություններ)
- մեր երկրի նկատմամբ վերաբերմունքի փոփոխությունը
- հայերի հարկադրված ներգաղթը և արտագաղթը
- սփյուռքահայության հետ կապի փոփոխությունները:

Այս դասակարգումը պայմանական է, քանզի առանձին գործոններ իրենց նշանակությամբ կարող են ձեռք բերել հիմքայինին բնորոշ արժեք, թեև ըստ առաջացման, գոյացման աղբյուրի՝ չեն դադարի փոփոխական լինելուց: Դիտարկենք այն կոնկրետ օրինակների միջոցով:

Ներքին պաշարների առկայությունը զգալի ներուժ է ցանկացած երկրի համար, եթե վերջիններիս օգտագործումը կատարվում է ճիշտ քաղաքականության միջոցով: Հայաստանի Հանրապետության ներքին ռեսուրսները խիստ սահմանափակ են, մասնավորապես բնական ռեսուրսները: Ընդերքի մասին հավաստի տեղեկություններ չկան շուրջ տասնյակ տարի, և պարզ չէ, թե որ հանքատեսակն է առավել քիչ, որը շատ, և արդյոք մեր ռեսուրսները արտադրության զարգացման համար բավարար են, թե սակավ: Անդրադառնալով սեփականաշնորհված ձեռնարկություններին՝ նշենք, որ ցանկացած մասնավորեցման գործընթացի նպատակը տնտեսության բոլոր ոլորտների զարգացման ապահովումն է, արտադրվող ապրանքների և ծառայությունների որակական հատկանիշների բարձրացումը և մրցունակության ապահովումը, ի վերջո, արտադրության խթանումը: Չգործող և սեփականաշնորհված ձեռնարկությունները տարիների ընթացքում ավերակներ դարձան և մինչև օրս էլ չեն ծավալում իրենց գործունեությունը: Ներկայումս էլ պահանջվում են հսկայական միջոցներ, որպեսզի վերագործարկվեն «անգործ» ձեռնարկությունները: Անկասկած մտահոգիչ է նաև ռազմավարական նշանակության ձեռնարկությունների «ճակատագիրը», քանզի վաճառքից հետո կարող է հայտնվել «օտարի տիրապետության ներքո». թերևս ականատես ենք նման օրինակների (հեռահաղորդակցության ոլորտ, էներգետիկա):

Անդրադառնալով ֆինանսական ռեսուրսներին՝ նշենք, որ այն գլխավոր պրոբլեմներից մեկն է, քանզի ցանկությունները շատ են, հնարավորությունները՝ քիչ: Սուղ բյուջե ունեցող Հայաստանի համար բոլոր խնդիրների լուծումը հնարավոր չէ: Ոստի արտաքին միջոցների դերը մեծ է մեր հանրապետության համար: Այստեղ խնդիրը ծառայության նպատակն է և թափանցիկ օգտագործումը: Պետական մարմինները պետք է հաշվետու լինեն ժողովրդին՝ ստացված վարկերի և դրամաշնորհների օգտագործման համար: Տարբեր միջազգային կառույցների կողմից ստացվող վարկերի, նաև արտոնյալ պայմաններով տրվող վարկերի նպատակային օգտագործումը, նրանց նկատմամբ վերահսկողությունը էապես կնպաստեն տնտեսության զարգացմանը, այնուհետև ժողովրդի, ապա միջազգային հանրության վստահությունը կներշնչի ղեկավարության հանդեպ: Վերջինս էլ կնպաստի կապիտալ ներդրումների հոսքի, առանց որի առաջընթաց հնարավոր չէ ակնկալել:

Վերոնշյալ բոլոր ռեսուրսները իրենց կտրվածքով հիմքային են, փոփոխական է նրանց գոյացման աղբյուրը: Այսինքն՝ բնական է նման գործոնների առկայությունը, բայց որտեղից կգոյանա, դա էլ կապված է մեկ այլ փոփոխական գործոնից՝ մեր երկրի նկատմամբ վերաբերմունքի փոփոխությունից:

Ակնհայտ է, որ հիմքային և փոփոխական գործոնները գտնվում են ինչպես փոխազդեցության, փոխկախվածության, այնպես էլ հակազդեցության մեջ: Յուրաքանչյուր գործոն ունի և՝ դրական, և բացասական ազդեցություն: Գտնվելով միմյանց հետ որոշակի կապերի մեջ՝ նրանք յուրովի են նպաստում տնտեսության զարգացմանը՝ իրականի վերածելով բոլոր հնարավոր ազդեցությունները: Որակական փոփոխություններն ուղեկցվում են հիմքային և փոփոխական գործոնների դրական ազդեցությամբ, հակառակ դեպքում բացասական հետևանքներն անխուսափելի են:

Կոնկրետ անցումային փուլի համար այս գործոնները կարող են առանձնահատուկ բնույթի լինել, սակայն ընդհանրապես նրանք հանդես են գալիս որպես ընդհանրական գործոններ՝ հարիր բոլոր ժամանակներին: Այսինքն՝ մեր երկրի համար, մասնավորապես անցումային փուլում, այս գործոնները պայմանավորված են ժամանակային բնույթով՝ պատճառական կապով, իսկ տարածելով իրենց արմատները՝ վերափոխվում են ընդհանուրի: Սակայն այդ նույն ընդհանուրի մեջ միևնույն գործոնները կարող են գործել յուրովի՝ նույն խմբի մեկ այլ գործոնի նկատմամբ: Օրինակ, ժամանակի և տարածության մեջ ցանկացած երևույթ, գործունեություն, ինստիտուտ, գաղափարախոսություն, քաղաքականություն կարող են արժեքավոր չլինել, թեև ի սկզբանե եղել են արդյունավետ: Ծրագրի իրականացման պահին մտածում և իրագործում ենք մի բան, բայց արդյունքում ստանում աներևույթ, անարժեք, խեղաթյուրված

իրականություն, քանզի ժամանակը իր մեջ ներառում է չնախատեսված իրադարձություններ՝ այլ հետևանքներով: Այսինքն՝ այն, ինչ կազմում է իրագործվելիք տնտեսական քաղաքականության տեսական հիմքը, կարող է ժամանակային բնույթ կրել՝ կախված փոփոխական գործոններից, և պրակտիկ գործունեությունում, որոշակի ժամանակաընթացքում, կենսականորեն չիրագործվել:

Հիմքային և փոփոխական գործոնների ազդեցությունը, նրանց դերը տնտեսական քաղաքականության մեջ առավել ակնհայտ է և պարզորոշ, եթե այն դիտում ենք միմյանց հետ փոխազդեցության մեջ, բացահայտում ենք նրանց որակական և քանակական փոփոխությունները: Առանձին գործոններ հանդես են գալից ուղեցույցի դերում, մյուսները՝ կարգավորիչի / հիմքային/, կամ լրացնողի և շարժառիթի դերում:

Ներկայիս անկայուն քաղաքական իրավիճակը, երկրաշարժի, պատերազմի հետևանքները խոչընդոտում են տնտեսական առաջընթացին: Հասարակությունը այս կամ այն քաղաքական գործչին կամ խմբերին ընտրելով, փաստորեն, կողմ է արտահայտում նրա կողմից ներկայացված բարեփոխումների ծրագրերին՝ քարտեզագրված քաղաքականությանը: Վերջինիս ընտրությունը սուբյեկտիվ բնույթ է կրում՝ կապված ներկայացվողի վարքագծից: Սովորաբար ակնկալիքներն ու սպասելիքները որոշակիորեն տարբերվում են տեղի ունեցող իրադարձություններից: Ոչստի այդ տարբերությունները էական ազդեցություն են ունենում և քաղաքական, և տնտեսական կյանքի վրա, իսկ ազդեցության պտուղները իր վրա է կրում հասարակությունը:

Հիմքային և փոփոխական գործոնները անընդմեջ գտնվում են հերթափոխման մեջ: Հնարավոր է, որ փոփոխական գործոնը դառնա հիմքային, սակայն հիմքայինը երբեք չի վերածվի փոփոխական գործոնի: Փոփոխվում է նրանց որակական բնութագիրը, վերափոխվում են էական բնութագրիչները:

Փոփոխական գործոնների երևան գալը, դրանց դերի ու նշանակության փոփոխությունները կարող են պայմանավորված լինել զանազան օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներով:

Այսպես, օրինակ, բնակլիմայական պայմանները հանդես են գալիս որպես փոփոխական գործոններ. նրանց ազդեցությունը հիմքային գործոնների վրա դրսևորվում է բացասական երևույթների ձևով՝ հղի սոցիալ-տնտեսական հետևանքներով: Արդյունքում առաջ է գալիս հիմքային գործոններից կախվածության խնդիր, օրինակ, ֆինանսական միջոցների, որի սղության հետևանքով դիմում ենք ևս մի հիմքային գործոնի՝ արտաքին ռեսուրսների օգնությանը: Սակայն վերջինս էլ կախվածության մեջ է մեկ ուրիշ փոփոխական գործոնից /

երկրի նկատմանբ վերաբերմունքի փոփոխությունը, քաղաքական իրավիճակը/:

Տնտեսության ոլորտում կադրային քաղաքականությունը տնտեսական քաղաքականության հիմքային գործոններից է: Տնտեսական խնդիրների իրականացումը կախված է որակյալ մասնագետներից: Որակյալ մասնագետները իրենց գործունեությունը ծավալում են արտերկրներում՝ բարձր աշխատավարձով, քանզի նույն աշխատանքը մեր հանրապետությունում ցածր է վարձատրվում: Սահմանափակ ռեսուրսներով Հայաստանի համար կարևոր է օգտագործել արտադրական կարողությունները, որակյալ մասնագետների ներուժը: Այս գործոնը ըստ էության հիմքային է, բայց պայմանավորված է փոփոխական գործոններով՝ արտագաղթով և ներգաղթով՝ որպես ժամանակի խնդիր: Չպետք է ժխտել, որ արտագաղթի բացասական հետևանքները դեռևս առկա են, բայց նաև արտագնա աշխատանքի շնորհիվ, նրանց ուղարկած միջոցների հաշվին է ներկայումս ապրում մեր ժողովուրդը, նրանց շնորհիվ է առաջընթաց նկատվում: Այստեղ ևս բախվում ենք երկու գործոնների փոխազդեցության և հակասության հետ. առկա ֆինանսական միջոցները հիմքային են՝ որպես կենսամիջոց, սակայն փոփոխական՝ ըստ գոյացման աղբյուրի:

Անցումային փուլի ցանկացած ժամանակահատվածում (քանզի անցումային փուլը բարդ և բազմաբնույթ գործընթաց է) կարող է գերիշխող կամ էական լինել միայն մեկ գործոն, որից կախված կլինի այդ պրոցեսի սահուն ընթացքը (օրինակ, ֆինանսական գործոնի դերը, ներքին պաշարները): Ուստի սխալ կլինի բացառել հիմքային և փոփոխական գործոնների դերը և ազդեցությունը՝ որպես տնտեսական զարգացման կարևոր նախապայմաններ: